Ապրիլի 26-ին տեղի ունեցավ Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հերթական նիստը, որը վարեց հանձնաժողովի նախագահ Սիմոն Տեր-Սիմոնյանը:

Հանձնաժողովը քննարկել է 11 բարեգործական ծրագիր:

Մասնավորապես, քննարկվել և հաստատվել են՝

«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Քաշաթաղի շրջանի Բերձոր քաղաքի ջրամատակարարման համակարգի վերակառուցման 2-րդ փուլի հեղինակային հսկողություն» և «Հյաստանի Հանրապետության Տավուշի մարզի Դիտավան գյուղի դպրոցի համար համակարգչային սարքավորումների ձեռքբերում» ծրագրերը.

Հայաստանի սոցիալական ներդրումների հիմնադրամի կողմից իրականացվող «Նոր Նորքի 2-րդ զանգվածի հանրակացարաններ» ՊՈԱԿ-ի 1-ին մասնաշենքի 1-ին հարկի վերանորոգում» ծրագիրը.

Հայկական Կարմիր Խաչի ընկերության կողմից իրականացվող «Տուբերկուլյոզով հիվանդներին սոցիալական աջակցության տրամադրում» դրամաշնորհային և «Կլիմայի արևելյան հարթակ» ծրագրերը.

«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիսի տարածաշրջանում կովերի արհեստական սերմնավորում» և «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի «Աստղավարդ» հասարակական կազմակերպության երեխաների վերականգնողական կենտրոնում ջեռուցման համակարգերի տեղադրում» ծրագրերը.

«Երևանի Ռոտարի ակումբ» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Տաթև գյուղի ներքին կոյուղու ցանցի և ներքին ջրագծի կառուցում» ծրագիրը.

«Քրոնիմետ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Վանաձորի Երեխաների խնամքի և պաշտպանության թիվ 1 գիշերօթիկ հաստատություն» ՊՈԱԿ-ի մասնակի վերանորոգում» և Հայաստանի Հանրապետության Արամիրի մարզի «Շահումյանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մասնակի վերանորոգում» ծրագիրը.

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարաության «Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային գրասենյանկ» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող «Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրի աջակցություն» ենթադրամաշնորհային ծրագիրը.

Նիստում քննարկվել և հաստատվել են նաև նախկինում հաստատված ծրագրերի շրջանակներում իրականացվող հարակից գործարքներ և տարբեր կազմակերպությունների հասցեներով ստացված բարեգործական բեռների ներմուծման ծրագրեր: